* * *

Մանուկ Աբեղյանը «Հայոց հին գրականության պատմություն» աշխատությունում այն հարցն է բարձրացնում, որ «Հայ պատմագրության ուսումնասիրությունը պահանջվում է նաև գրական տեսակետով», և հստակորեն տարբերակում-սահմանում է գրականի սահմաններն ու տեսակները. «Նրա (հայ պատմագրության–Ա.Ն.) մեջ կան իսկական գրական երկեր, որոնք հորինված են գեղեցիկ ձևով, հարուստ են գեղարվեստական տարրերով, պատկերավոր արտահայտություններով: Կան այնպիսիները, որոնց մեջ խառն են գրական և ոչ-գրական տարրերը, բայց կան ամբողջ հատվածներ, որոնք գրական արժեք ունեն: Այդպես են մանավանդ այն կտորները, որոնք ծագում են կամ ազդված են ժողովրդական վիպական բանահյուսությունից, կամ լի են հեղինակի քնարական զեղումներով, կամ որոնց հեղինակները ձգտում են գեղեցիկ հորինել, ճարտասանական ձևերով ու բանաստեղծական պատկերներով»[30]:

Աբեղյանի բարձրացրած այդ խնդիրն իրականացվել է մասամբ, առավել հաճախ՝ 5-րդ դարի հատույթում, երբեմն՝ շատ թռուցիկ կերպով, հիմնականում այլ ուսումնասիրությունների համատեքստում՝ մասնավոր խնդրառություններով:

Սույն աշխատությունն առաջին փորձն է ոչ միայն Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» աշխատությունն իբրև գրական երկ քննելու, այլև ընդհանրապես ***առանձին*** պատմագրական երկին նմանատիպ մոտեցման առումով: Մեր համոզմամբ՝ գոնե հայ պատմագրության հատույթում միջնադարյան հայ գրականու-

---

[30] ***Մանուկ Աբեղյան,*** Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, էջ 155: